№ 189 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17 **1898** ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17 № 189

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹՎԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻՐ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը 1 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։

Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Պօղոս Տէր-Յովհաննիսեան սրտի ցաւով յայտնելով իր ամուսնի՝

ԵՂԻՍԱԲԷԹ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

մահը, խնդրում է ծանօթներին և ազգականներին չնորհ բերել յուղարկաւորութեան։ Թաղումը լինելու է հոկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Մուխրան գիւղում։ Կիրակի առաւօտեան Թիֆլիսից ժամը 9 և 10 ր. մեկնող № 1 գնացքը, հաճաձայն երկաթուղային վարչութեան կարգադրութեան, կանգ կառնի Քոանկա կայարանում 2 րոպէ։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատրաստվում է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական աշխատանքներով և ոչ թէ դրամական նպաստով. Մատչելի գրքեր. Մի հարց. Նամակ Աստրախանից. Նամակ Դարաչիչագից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժանտախտը Վիեննայի մէջ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զբաղանում։

ՊԱՏՐԱՍՏՎԵ՛ՆՔ

—

Միաժամանակ երկու տեղ երևան եկան ժանտախտի դէպքեր՝ Վիեննայում և Սամարղանդի շրջանում։ Վիեննայից ստացվող լուրերը, ինչպէս տեսնում են մեր ընթերցողները, հանգստացնող են. գոնէ գերմանական և աւստրիական հեղինակաւոր գիտնականներ ապահովացնում են, որ Հնդկաստանից երկու բժիշկների ձեռքով բերած միկրօբները համաձարակ չեն առաջացնի Եւրօպայում։ Իսկ Սամարղանդի շրջանում եղած դէպքերը, ինչպէս հաստատում է կառավարչական հաղորդագրութիւնը, պէտք է համարել ժանտախտի դէպքեր։ Այնտեղ էլ ձեռք են առնված խիստ միջոցներ և պէտք է յուսալ, որ թէ՛ Վիեննայում և թէ Միջին-Ասիայում սարսափելի ախտը կը խեղդվի և չի տարածվի։

Բայց այդ հանգստացնող լուրերը չը պիտի իրաւունք տան մեզ ասելու ասիացիներին յատուկ ծուլութեամբ. «Է՛հ, կանցնի»։ Հաղորդակցութիւնների ներկայ կատարելագործված ճանապարհները արագութեամբ տեղափոխում են ոչ միայն մարդկանց, այլ և հիւանդութիւնները։ Միջին-Ասիան և Վիեննան մեզանից շատ չեն հեռու. որքան և հաւանականութիւն շատ լինի՝ թէ հիւանդութիւնը այդ տեղերում կոչնչացվի գիտութեան հայթայթած միջոցներով, բայց վատ չէր լինի, որ մենք թոյլ տայինք և այն միտքը, որ մահաբեր բացիլները կարող են խուսափել այդ միջոցներից և տարածվել։ Ասում ենք, որ նախազգուշութեան համար նոյն իսկ լաւ կը լինի աչքի առաջ ունենալ այդ դժբաղդութեան հնարաւորութիւնը։ Փոքր ի շատէ քաղաքակրթութեան հետևող հասարակութիւնը չը պիտի աչք փակէ վտանգի առաջ, այլ, ընդհակառակն, լաւ իմանալով որ ունի շատ թշնամիներ, պիտի ուշադրութեամբ հետևէ նրանց և հանդիստ կերպով պատրաստվի, զինվի մի անողորմ պատերազմի բոլոր միջոցներով։ Երկու տարի առաջ, երբ ժանտախտը Հնդկաստանում սպառնալից կերպարանք ստացաւ, մեզ մօտ մի թեթև շարժում սկսվեց. քաղաքները իրանց պակասութիւններն էին քննում, բժիշկները, ինտելիգենցիան խորհուրդներ էին տալիս, թէ ի՛նչ պէտք է անել մեր հակառողջական դրութիւնը բարւոքելու համար։ Այն ժամանակ անդութ թշնամին շատ էր հեռու, իսկ այժմ տեսնում ենք նրան երևան եկած աւելի մօտիկ տեղերում։ Մի՞թէ այժմ պիտի լուռ և անշարժ մնանք։

Ո՛չ և ո՛չ։ Երկու տարի առաջ մենք միայն խօսում էինք, բայց ոչինչ չը գործեցինք, այնպէս որ մեր երկիրը նախկին անպատրաստ դրութեան մէջ է գտնվում։ Այժմ պէտք է ոչ միայն խօսել, այլ և գործ կատարել։ Մենք երբէք չը պիտի մոռանանք, որ միայն տգիտութեան, խաւարի և հսկայական յետամնացութեան մատնված թշուառ ժողովուրդներն են աղէտի ժամանակ գլուխ կորցնում, ոչխարային բնազդով իրարանցում սկսում և ճանճերի նման ջարդվում տալով մէկի փոխարէն հարիւր և հազար զոհ։ Մենք պիտի հասկանանք, որ ամեն մէկի քաղաքացիական պարտականութիւնն է հաստատ կանգնել թշնամու դէմ, կռուել և միայն այդ կռուի մէջ որոնել իր փրկութիւնը։ Բոլոր հասարակութիւնների, բոլոր դասակարգերի համերաշխ գործունէութիւն—ահա՛ ինչ է պահանջում բոպէն։ Թո՛ղ ժանտախտը ոչնչանայ այն տեղերում, ուր նոր երևան եկաւ. բայց մենք ի՞նչ միջոց կը ստանանք, եթէ այժմից իսկ միջոցներ ձեռք առնենք նրա դէմ։ Իւրաքանչիւր կռուի մէջ յաղթում է նա, ով պատրաստված է. հասարակ խելացիութիւնը պահանջում է պատրաստ լինել վաղօրօք, օգտվել այն ժամանակից, որ կայ մինչև կռիւը։ Եթէ մեր արաճների մեծ մասը մի քանի ժամանակից յետոյ նոյն իսկ անօգուտ լինի, ի՞նչ միաս։ Կռուի պատրաստվող կողմը գրօշների և նոյն իսկ ահագին ծախսերի հաշիւ չէ տեսնում։ Նրա պարտքն է ամեն ինչ ունենալ իր ձեռքում՝ յաղթանակ շահելու համար։

Ուրեմն գործենք, քանի ժամանակ կայ։ Մենք կարող ենք վստահ լինել, որ մեր սեփական բարօրութեան համար արածը ոչ ոք մէկն էլ զուր չի կորչի։ Գիտութիւնը մեզանից ուրիշ մեծագործութիւններ չէ պահանջում բացի նրանից, որ մեր կեանքը դրված լինի առողջապահական լաւ պայմանների մէջ։ Եւ եթէ մենք կատարենք այդ պահանջը, մեր օգուտը ահագին կը լինի, նոյն իսկ եթէ ազատ մնանք ժանտախտի դժբաղդութիւնից։ Առողջապահական բարելաւ դրութիւնը մեզ հարկաւոր է ամեն օր, ամեն ժամ։ պէտք է կրկնապատկել եռանդը, շարժվել, գործել։ Թո՛ղ խօսեն մեր բժիշկները, ծանօթացնեն մարդկանց ժանտախտի հետ, թո՛ղ մեր քաղաքային ինքնավարութիւնները, գիւղական հասարակութիւնները դէն դնեն ծուլութիւնը, ձեռք ձեռքի տան և գործեն, անդադար գործեն։ Պատրաստվե՛նք...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՎ ԵՒ ՈՉ ԹԷ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏՈՎ

—

Ի՞նչ կերպով օգնել անբերրիութիւնից և երաշտութիւնից վնասված նահանգների ազգաբնակութեան. ինչ միջոցներ ձեռք առնել, որ գիւղական ազգաբնակութեան տնտեսութիւնն այնքան զարգանայ և բարգաւաճի, որ այլ ևս տեղի չունենան պարբերական սովեր, գիւղացին ստիպված չը լինի ծախել իր գոյքը, տաւարը՝ հաց գնելու համար։ Այս կարևոր հարցը մինչև այժմ էլ գոհացուցիչ կերպով չէ լուծված, բայց նրա լուծումից է կախված ժողովրդի ներքին կեանքի ամենակենսական կողմերից մինը—միանգամ ընդ միշտ վերջ դնել ժողովրդական աղէտին և անբերրիութիւնից առաջացած սարսափելի վնասներին։

Ներքին գործերի մինիստրի ճանապարհորդութիւնը անբերրիութիւնից վնասված նահանգներում, անկասկած, շատ պէտք է նպաստէ այդ կարևոր հարցի լուծման։ Փորձերը և անցեալ տարիների օրինակը ցոյց են տալիս, որ օգնութեան մինչև այժմ ընդունված ձևը անբաւական է։ իսկ այդ ձևը կայանում էր նրանում, որ պետական գանձարանը անբերրիութիւնից վնասված ազգաբնակութեան դրամ էր փոխ տալիս երկար ժամանակով, մաս-մաս վճարելու պայմանով։ Նպաստի այդ ձևն անբաւականաչափ և ապարդիւն դուրս եկաւ այն պատճառով, որ բաժանված դրամը ոչ միայն որևէ էական օգնութիւն չը հասցրեց գիւղական ժողովրդին, ոչ միայն չը բարւոքեց նրա տնտեսութիւնը, այլ նրա մեծ մասը կորաւ, որովհետև գիւղական ժողովուրդը 1891 և 1892 թվականներին ստիպված էր ամեն ինչ ծախել, ինչ որ ունէր։ Ինչպէս ասացինք, մեր գիտակցութիւնը սիրելի է, փայտ չէ նոյն իսկ, եթէ դա մի զզուելի մուկ լինի։ Ժամեր անցան, ծանր, յաւիտենականութեան չափ երկար ժամեր. թախիծը ճնշում էր հոգիս։ Ես՝ աչքերս ակամայ ուղղած յատակի ծակերին, ակնապիշ դիտում էի, սպասելով որ գոնէ մէկներից մէկն ու մէկը դուրս գայ. միայն կենդանի շունչը կարող էր մի փոքր թեթևացնել իմ ծանր վիճակը, յիշեցնել ինձ, որ աշխարհը դեռ կայ, դեռ ապրում է, որ օր ու արև, աստղեր ու լուսին, երկինք ու երկիր անցած գնացած բաներ չեն, որ մնութեան կեանքը դեռ չէ դադարել, շարունակվում է։ Բանտ, ինչ մօտ է զգում մարդ այդտեղից դերեզմանը. մի քայլ միայն, մի հատիկ քայլ է մինչև յաւիտենական բնակարանը. և մթթէ նոյն իսկ այդ բանտը հէնց դերեզման չէր, ուր ես թաղուած էի կենդանի... Օդը զարհուրելի էր, այնպէս ծանր, որ անկարելի էր շնչել. դարշահոտութիւնն անտանելի էր. մէկներն իրանց ներկայութեամբ պատճառած մթիթարութիւնը շատ թանգ էին վաճառում բանտարկեալին. դարշահոտութիւնը նրանց բացած անցքերից էր փչում, որովհետև հէնց բանտի տակից էր անցնում քաղաքի աղբատար խողովակը։

«Օրվայ որ ժամն էր, ես չը գիտէի. կէսօր էր արդեօք, երեկոյ, թէ գիշեր, բայց իմ զնդանում արդէն խաւար էր և լուռ, միայն պատի ճեղքերից մինի մէջ ես կարողացայ նշմարել մի սպիտակ բան, ես մատներով դուրս քաշեցի այն, դա լուցկու ամանի մի կտոր էր, որի վրա ասես թէ ինչ-որ գրեր կային. ես հետաքրքրվեցի իմանալ, թէ ինչ է կտակել իր տարաբաղդ յետնորդներին մի նախկին բանտարկեալ, որ այս դժոխքից դուցէ կախաղան է առաջնորդվել և կամ մի աքսօրավայր... Բարեբաղդաբար լուցկի կար մօտս։ Լուցկին վառեցի. «օվ և լինիս դու, իմ խեղճ բաղդակից և յաջորդ, գրած էր այնտեղ, ոչինչ չը խոստովանվես, ոչ մի անուն չը տաս, եթէ գիտես. քաղցր խօսքերով չը խաբվես, խոստովանութիւնը չի փրկի քեզ»։ Հանդէպ ոսկորներիդ, եթէ մեռած ես, մրմնջացի ես։ Ի՞նչ խորհրդաւոր դաս էր այդ, որ այս մահու աշխարհի բնակիչները տալիս էին իրանց յետնորդներին։

«Յատակի վրա նշմարեցի ինչ-որ ծակեր. միայն մէկներն են այդպիսի ծակեր բաց անում, երևի այնտեղ ներքևում նրանց մի ամբողջ գիւղ կայ, մտածեցի ես։ Այս հանգամանքն ինձ ցաւ չը պատճառեց, նոյն իսկ մխիթարեց։ Բանտի, այն էլ այսպիսի բանտի ճնշող, սպանիչ միայնութեան մէջ որ և է կենդանու գոյութեան գիտակցութիւնը սփոփիչ է, փայտ չէ նոյն իսկ, եթէ դա մի զզուելի մուկ լինի։ Ժամեր անցան, ծանր, յաւիտենականութեան չափ երկար ժամեր. թախիծը ճնշում էր հոգիս։ Ես՝ աչքերս ակամայ ուղղած յատակի ծակերին, ակնապիշ դիտում էի, սպասելով որ գոնէ մէկներից մէկն ու մէկը դուրս գայ. միայն կենդանի շունչը կարող էր մի փոքր թեթևացնել իմ ծանր վիճակը, յիշեցնել ինձ, որ աշխարհը դեռ կայ, դեռ ապրում է, որ օր ու արև, աստղեր ու լուսին, երկինք ու երկիր անցած գնացած բաներ չեն, որ մնութեան կեանքը դեռ չէ դադարել, շարունակվում է։ Բանտ, ինչ մօտ է զգում մարդ այդտեղից դերեզմանը. մի քայլ միայն, մի հատիկ քայլ է մինչև յաւիտենական բնակարանը. և մթթէ նոյն իսկ այդ բանտը հէնց դերեզման չէր, ուր ես թաղուած էի կենդանի... Օդը զարհուրելի էր, այնպէս ծանր, որ անկարելի էր շնչել. դարշահոտութիւնն անտանելի էր. մէկներն իրանց ներկայութեամբ պատճառած մթիթարութիւնը շատ թանգ էին վաճառում բանտարկեալին. դարշահոտութիւնը նրանց բացած անցքերից էր փչում, որովհետև հէնց բանտի տակից էր անցնում քաղաքի աղբատար խողովակը։

«Օրվայ որ ժամն էր, ես չը գիտէի. կէսօր էր արդեօք, երեկոյ, թէ գիշեր, բայց իմ զնդանում արդէն խաւար էր և լուռ, միայն պատի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՆԴԱՆՈՒՄ

(Յիշողութիւններ)

I

Նա համարեա ծեր է այժմ. հազիւ տաս տարի անցած լինի, երբ ես նրան տեսայ առաջին անգամ, բայց այդ ժամանակը աւերմունք է գործել նրա մարմնի վրա. այն ժամանակ նա քսան տարեկան էլ չը կար, իսկ այժմ քառասունից անց է երևում։ Ես չը ճանաչեցի նրան, երբ ճաշարանում մօտեցաւ ինձ և ձեռքը մեկնեց.

—Ձես կանաչում, այնպէս չէ՞, մոռացել ես Ներսէսին։

—Մի՞թէ այդ դու ես, զարմացած ճչացի ես. օ, իմ խեղճ Ներսէս, ինչպէս ծերացել ես...

—Ես եմ. տաս տարի է ընդամենը, ինչ չենք տեսնվել, բայց ինչեր եմ կրել այս տաս տարում։ Եւ նա պատմեց, զիջանելով խնդիրքիս։

—

«Ես բանտարկված էի,—այսպէս սկսեց նա,—գիտես երբ, 18... թվի ամառը. ինչպէս և ինչու համար, այդ ես չը գիտէի, չը գիտեմ և այժմ, այդ բանն այնքան արագ, այնպէս անսպասելի կերպով կատարվեց, որ ես անկարող եղայ հասկանալ, թէ ինչ է կատարվում ինձ հետ։ Բայց ես բանտարկված էի, այդ անկասկած էր, բոլորը ինչ որ ինձ շրջապատում էր, անողորմ կերպով վկայում էր՝ որ ես բանտարկված էի։ Իսկապէս բանտ չէր այն, այլ մի բուն. մեր երկրում նրան «զնդան» են ասում։ Այդ զընդանը նեղլիկ էր ու ցածր, բայց այդ բառերով դժուար է արտայայտել, թէ որքան ցածր էր նա։ Երբ ես փորձում էի ոտքի կանգնել, ստիպված էի լինում կռանալ մինչև մէջքս, իսկ երբ կամենում էի պառկել, պէտք էր լինում մէջքս մի պատին դէմ տալ և ոտներս հակառակ պատին ցից անել՝ կազմելով մի աղեղ։ Խաւար էր ներսը, հազարեա գիշեր, լոյսի մի քանի գունատ, ողորմելի, խիստ աղօտ շիթեր հազիւ հազ՝ ասես վախվախելով թափանցում էին դռան վրայի փոքրիկ, շատ փոքրիկ ճեղքից, որ հազիւ եղան աչքի մեծութիւն ունէր։ Այդքան չնչին լոյս գուցէ մեռելներն էլ իրանց գերեզմանում ունենան. վատատես չէի, այդքանով էլ կարողացայ պատերը նշմարել։ Ի՞նչ գոյն ունէին նրանք, այդ դժուար էր որոշել, միայն կասեմ, որ նրանց գոյնը և՛ սև էր, և՛ կանաչ, և՛ կարմիր, և՛ սպիտակ. քանի մի գոյների զզուելի խառնուրդ, տեղ-տեղ խոնաւութիւնից մամռակալած, բորբոսնած։ Այդպէս են լինում գիւղական գետնափոր գոմերի պատերը ձմեռ ժամանակ։ Պատերը ճեղքեր ունէին, մանր, հազիւ նկատելի ճեղքեր. դրանցից մինի մէջ ես կարողացայ նշմարել մի սպիտակ բան, ես մատներով դուրս քաշեցի այն, դա լուցկու ամանի մի կտոր էր, որի վրա ասես թէ ինչ-որ գրեր կային. ես հետաքրքրվեցի իմանալ, թէ ինչ է կտակել իր տարաբաղդ յետնորդներին մի նախկին բանտարկեալ, որ այս դժոխքից դուցէ կախաղան է առաջնորդվել և կամ մի աքսօրավայր... Բարեբաղդաբար լուցկի կար մօտս։ Լուցկին վառեցի. «օվ և լինիս դու, իմ խեղճ բաղդակից և յաջորդ, գրած էր այնտեղ, ոչինչ չը խոստովանվես, ոչ մի անուն չը տաս, եթէ գիտես. քաղցր խօսքերով չը խաբվես, խոստովանութիւնը չի փրկի քեզ»։ Հանդէպ ոսկորներիդ, եթէ մեռած ես, մրմնջացի ես։ Ի՞նչ խորհրդաւոր դաս էր այդ, որ այս մահու աշխարհի բնակիչները տալիս էին իրանց յետնորդներին։

«Յատակի վրա նշմարեցի ինչ-որ ծակեր. միայն մէկներն են այդպիսի ծակեր բաց անում, երևի այնտեղ ներքևում նրանց մի ամբողջ գիւղ կայ, մտածեցի ես։ Այս հանգամանքն ինձ ցաւ չը պատճառեց, նոյն իսկ մխիթարեց։ Բանտի, այն էլ այսպիսի բանտի ճնշող, սպանիչ միայնութեան մէջ որ և է կենդանու գոյութեան

1893 թուերի անբերրիութեան ժամանակ, ստանալով հարիւր յիսուն միլիոն բուբլի նըպաստ, մինչև այսօր կարողացել է վերադարձնել միայն 15 միլիոն. ուրեմն 135 միլիոն գումարը, որ մնացել է գիւղացիների վրա, չը կարողացաւ գոնէ այն օգուտն ունենալ, որ ապահովէր ազգաբնակութիւնը նոր երաշտութեան վնասներից: Այդ փորձը պարզ կերպով ցոյց է տալիս, որ անբերրիութեան աղէտալի հետևանքների առաջն առնելը և գիւղական ազգաբնակութեան էական օգնութիւն հասցնելը չէ իրագործվում դրամական փոխառութեան միջոցով:

Ի՞նչ անել ուրեմն գիւղական ժողովրդին իրական, էական օգնութիւն հասցնելու համար: Այդ հարցը լուծելն անհրաժեշտ է ոչ միայն մարդասիրութեան, հասարակական համերաշխութեան և հայրենասիրութեան տեսակէտից, այլ նրա հիմնաւոր և բաղմակողմանի քննութիւնն անհրաժեշտ է նաև զուտ պետական տեսակէտից: Ֆինանսական գիտութիւնը վաղուց ճանաչել է իբրև ակսիօմա այն իրողութիւնը, որ պետական գանձարանի համար ամենաապահով և առատ եկամտի աղբիւրը՝ գիւղական ժողովուրդն է և ոչ քաղաքների առևտրա-արդիւնաբերական տարրը: Առևտրական և արդիւնաբերական ճգնաժամերը այնքան զգալի հարուած չեն հասցնում պետութեան ֆինանսական ոյժերին, որքան երկրագործական ճգնաժամերը: Գիւղական ազգաբնակութեան աղքատանալը ոչ միայն ահագին զոհեր է առաջ բերում պետութեան կողմից, այլ անդամալուծում է և պետական կեանքի միւս ճիւղերի կանոնաւոր ընթացքը: Սպառելով 150 միլիոն բուբլի փող, պետութիւնը չը կարողացաւ այժմեան անբերրիութեան առաջն առնել, իսկ գիւղական ներկայ տնտեսական պայմաններին մօտ ծանօթ անձինք հաստատում են, թէ սովը, անբերրիութիւնը պարբերաբար պէտք է կրկնվեն, սաստկանան, եթէ գիւղական տնտեսագործութիւնը մնայ իր այժմեան վիճակում:

Միւս կողմից այն հանդամանքը, որ վերջերս Ֆինլանդիայում պատահած անբերրիութեան առաջն առնվեց, առանց որ ֆինլանդական կառավարութիւնը մի հատ մարկ անգամ գիւղացիներին փոխ տար, այլ այդ արդիւնաւոր հետևանքին հասաւ, կազմակերպելով երկրի մէջ հասարակական աշխատանքներ,—պարզ ապացուցանում է, որ խելացի և նպատակայարմար միջոցներով կարելի է միշտ աղէտը խափանել: Եւրոպայի նոյն իսկ ի բնէ անբերրի երկիրներում վաղուց անհետացել է սովը, երաշտութիւնը, բայց Ռուսաստանի պէս հարուստ և բերրի երկրում սովը պարբերական երևոյթ է դարձել:

Տարակոյս չը կայ, որի մինիստրի ճանապարհորդութիւնից յետոյ, երբ խնդիրը կը դրվի լուծման հողի վրա, ոչ միայն պետական հաստատութիւնները, այլ և հասարակական բոլոր ձեռնհաս հիմնարկութիւնները կը նպաստեն հարցի հիմնաւոր և նպատակայարմար լուծման:

ՄԱՏՉԵԼԻ ԳՐՔԵՐ

—

Մի շարք դիտողութիւններ, որ արել են ժողովրդական ընթերցասիրութեան վերաբերութեամբ հարաւային Ռուսաստանի ուսուցիչները, ցոյց են տալիս, որ ժողովուրդը մի ճեղքում ճաճռացնում էր իր տխուր միակերպ երգը խաւարի և միայնութեան սիրահար ճպուռը: Ես ականջ էի դնում. «ճը՛ռ, ճը՛ռ». այդ էլ մի բան էր, այդ էլ սփոփիչ էր... Ցանկարծ դգացի ձեռքիս վրա տաք, քնքոյշ շնչառութիւն: Առանց այդ ձեռքս շարժելու, ես զգուշութեամբ մօտեցրի միւս ձեռքս և բռնեցի մի փափկիկ առարկայ. դա մի մեծ մուկն էր, փափուկ թաւշանման մորթով. նա երկիւղի կամ անհանգստութեան ոչ մի ցոյց չարեց, այլ շարունակում էր լիզել ձեռքերս և ով գիտէ՝ քանի դժբաղդների արիւնոտ վէրքերն էր լիզել այս կենդանին... նա կամաց-կամաց բարձրացաւ դէպի ուսս, նա խաղում էր մազերիս հետ, ես նրան չը քշեցի, չը հալածեցի, և իրաւունք էլ չունէի, նա իր սեփական բնակարանումն էր, նա այստեղ տէր էր, ես էի միայն անկոչ հիւրի պէս ներս եկել խռովելու նրա կեանքի միակերպութիւնը, խանգարելու նրա հանգիստը: Ահա նա վար իջաւ և հեռացաւ. ինձ վրա երևի ոչինչ ախորժելի բան չը դաւ, արիւն էր փընտռում, ով գիտէր... նա ծածկվեց իր բնում, ես մնացի դարձեալ միայնակ. միայն ճպուռը անհասկանալի եռանդով շարունակում էր իր երգը՝ «ճը՛ռ, ճը՛ռ». միակերպ, միաձայն, ասես թէ վերջ առնելու չէր ողորմելի միջատի այս տխուր մեղեդին. ինչ էր որոնում այդ խղճալի կենդանին այս զարհուրելի բնում, մթթէ ամբողջ աշխարհում մի այլ յարմարաւոր տեղ չէր գտել իր բնակութեան համար, ով կարող էր իմանալ. բայց ինձ թվում էր այդ բոպէին, որ ճպուռի երգի համար յիրաւի ամենայարմար տեղը հէնց այս բանտն էր. մահու մեղեդի մահու աշխարհում...

«Ահա նա էլ լռեց: Լուռ էր շուրջս, խոր, ահաւոր լռութիւն, միայն դրսից լսվում էր պահապանի ոտնաձայնը, նա անվերջ գնում գալիս էր խաւար կօրիդորում, մերթ ընդ մերթ կանգ էր առնում, ականջ դնում և կրկին շարունակում գնալ գալ միշտ միակերպ, միշտ համաչափ քայլերով:

«Գուցէ կէս գիշերն անցած լինէր, բայց քունը շարունակում էր խուսափել իմ աչքերից. մարմնիս մի փոքր յարմար դրութիւն տալու բոլոր փորձերս անպտղաց անցան, ես անկարող եղայ նոյն իսկ խոնաւ գետնի վրա հանգիստ առնելու բարիքը վայելել: Ստիպված նստեցի և մտածում էի իմ դրութեան վրա, մտածում էի անվերջ... մտածելու էլ շատ և շատ բան կար: Ես ապշած էի մնացել, այն աստիճան այս կացութիւնս ինձ յանկարծակի եկաւ:—Մթթէ ես բանտարկված եմ, մտածում էի ես. ինչու, որ յանցանքիս համար. ես յանցանք չեմ գործել, ինչպէս կարող եմ ես բանտարկված լինել. մթթէ բոլորովին անմեղ մարդը այս ահաւոր զընդանի մէջ կը նետվի, այդ անհնարին է: Աչքերս դէպի դուռը, ծնկանս վրայից ցած սողաց փոքրիկ Շուշանիկը և վայր ընկաւ յատակի վրա, նա ճչաց ցաւից, ես նրա ձայնից վեր ցատկեցի, իմ առաջ կանգնած էր լամպը ձեռքին բռնած մի դաժան պատկեր, մի դև: Ո՞վ էր դա, ինչ եղաւ խանութի աշակերտը: Աչքերս տրորում եմ, նայում, նայում, Տէր-Աստուած, սա թիւրք է, ինչ է ուզում ինձանից, ինչու է այսպէս վաղ առաւօտ ներս խցկվել մեր տուն. դարձեալ նայում եմ և չեմ կարողանում հասկանալ, թէ երկու պատկերներից որն է երազ. իմ տունն ու ընտանիքը, թէ այս ներս մտնողը՝ իր դաժան զարհուրելի պատկերով. ով է սա...

—Վա՜յ կաց, բաւական է մրափես, գուցէ անծանօթ պատկերը և ոտքի մի ծանր հարուած հասցրեց կողքիս: Ցաւը խիստ էր, քունս իսպառ փախաւ, ես ոտքի կանգնեցի, ամեն բան պարզվեց. իմ առաջ կանգնած էր ինքը բանտապետը և այս վերջին սարսափելի պատկերը անողոք իրականութիւն էր, միայն այն՝ իմ երջանկութեան պատկերն էր երազ, իմ տան ու ընտանիքի պատկերը չքացաւ. ասես թէ դառն ճակատագիրը ցոյց տուեց ինձ այդ մխիթարական երևոյթը, որպէս զի աւելի ծանր լինի իրականութեան պատճառած ցաւը...

Ա. Հարոնեան

ՄԻ ՀԱՐՑ

—

Այժմ մեր գիւղական հասարակութեան առաջ դրած է մի հարց: Ահա: Ամենքին յայտնի է, որ որ և է կառավարական պաշտօնեայ լինի դա գաւառապետ, քննիչ, պրիստաւ, հասարակ գրագիր, թէ վերջապէս մի չափաւ, ամեն անգամ, երբ ոտք է դնում մի որ և է գիւղ, իրանց ուտելու կամ ձիերին կերակրելու համար սեփական գրպանից մի կոպէկ անգամ չեն ծախսում, այլ բոլոր փողը դուրս է գալիս հասարակութիւնից: Իւրաքանչիւր տարի յիշեալ պաշտօնեաների համար արած ծախսերը հաշվում են և երբ տարին մի անգամ պէտք է ժողովել պետական հարկը՝ վրան աւելացնում են այդ ծախսերը և այդպէս ժողովում:

Այժմ հարց է առաջանում, թէ արդեօք հասարակութիւնը պարտական է այդ պաշտօնեաների համար ծախսեր անել, թէ իրանք պաշտօնեաները իրանց գրպանից պէտք է անեն: Ի հարկէ, լինում են համարձակ մարդիկ (դրանց թիւը քիչ է), որոնք վճռական կերպով յայտնում են, թէ «իրանք պաշտօնեաները պէտք է ծախսեն»: Բայց ո՞վ է լսողը: Շատ գիւղերում այնպէս են յարձակվում խեղճի վրա և այնպէս են դատապարտում, որ նա մնում է շուարած և այդ «համարձակի» ձայնը խեղդվում է մեծամասնութեան առաջ, որը միաբերան բղաւում է. «Ո՛չ, այդ հասարակութեան պարտքն է, մթթէ կարելի է ոստիկանին, կամ մի որ և է ստոր պաշտօնեային ասել. – «ինչ որ կերար՝ ծախսը տուր», ամօթ է մինչև անգամ. դա մեզ վրա թանգ կը նստի, դրա փոխարէն պաշտօնեան մեզ կը նեղացնի»:

Հասարակութիւնը, օրէնքով, բոլորովին պարտական չէ այդ պաշտօնեաներին կերակրելու, և քանի որ դրանք ռոճիկ են ստանում, թող իրանց համար ծախսեր անեն: Եւ ուրախալի է, որ շատ տեղ այդպէս է լինում: Մի քանի շրջաններում, նահանգական իշխանութեան կարգադրութեամբ, ոչ մի պաշտօնեայ իրաւունք չունի ձրիաբար գիւղացիներից ապրուստ ուզել, և կամ ձիերի համար կերակուր, այլ այդ բոլորը պէտք է իր փողով անէ: Այդ հիման վրա՝ մինչև անգամ շատ գիւղերում այդպիսի ծախսերը հասարակութիւնը կապալով է տալիս այս և այն ցանկացողին: Հետևաբար ցանկալի է, որ այդ արդար կանոնը ընդհանուր դառնայ բոլոր գիւղերի համար, և յետինկած գիւղերը չը կարծեն, որ եթէ «չինովնիկին» կամ «մեծաւորին» ձրի չը պահեն, նա կարող է վրէժ առնել: Օրէնքն արգելում է, և պէտք է, որ օրէնքից օգուտ քաղեն բոլոր գիւղերը:

Հ. Կ.

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 8-ին

«Մշակի» № 153-ի մէջ՝ մեր օրիորդների մասին գրած յօդուածը պ. Մ. Տէր-Զաքարեանց «Մշակի» № 177-ի մէջ՝ փորձում է ջրել և մեղադրել տղամարդկանց: Այդ առիթով մենք հարկաւոր ենք համարում աւելի պարզաբանել խնդիրը:

Փաստերը ցոյց են տալիս, որ տղամարդիկ վերաբերվում են օրիորդներին ինչպէս մի ապրանքի, իսկ մեր օրիորդները այդ լաւ հասկանալով՝ լռութեամբ տանում են: Այդ անախորժութիւնները, ճիշդ է, խօսակցութեան և մեղադրանքի տեղիք են տալիս, բայց դէպքերը զարմանալի միակերպութեամբ յաջորդում են միմեանց: Մթթէ այդպէս պիտի լինէր: Ահա հէնց այդ խնդրին նուիրելով մեր առաջին թղթակցութիւնը, մենք մեղադրել ենք օրիորդներին, երբէք, ի հարկէ, չարդարացնելով տղամարդկանց: Եւ եթէ առաջին քայլը մենք պահանջել ենք օրիորդներից, այդ էլ նրա համար, որ սրանք, ինչպէս ասել ենք, կրթութեամբ աւելի բարձր են կանգնած: Ցօդուածագիր պարոնը համաձայնվելով, որ օրիորդները աւելի բարձր են կրթութեամբ, այնու ամենայնիւ կրկնում է այն սովորական միտքը, թէ ինչ անեն խեղճ աղջիկները, երբ ստիպված են չուզած ընտրութեան ենթարկվել: Սա, մեր կարծիքով, սխալ է: Ենթադրենք, որ պ. թղթակցի ասածն ուղիղ է—օրիորդն ստիպված է գնալ չուզած փեսային: Ապա ինչու համար է նրա կրթութիւնը. մթթէ նրա համար, որ ենթարկվի ընդհանուր հոսանքին և անհետանայ նրա մէջ: Մենք միշտ սովոր ենք մեղադրել շրջանը, հոսանքը. բայց մթթէ քիչ է պատահում, որ մի ձայնը ձեռք է բերում գերակշիռ նշանակութիւն և լինում է պատճառ դէպքերի նոր ուղղութեան: Կրթված մարդը պիտի ունենայ սեփական կարծիք, ինիցիատիվի ոյժ: Ի հարկէ սրա համար շատ անգամ զոհողութիւններ է պահանջվում, բայց ինչ արած, քանի որ ամեն մի առաջադիմական գործ և թէ նոր հոսանք պահանջում է զոհ. թողէք մի քանի օրիորդներ մնան չամուսնացած, թողէք մի քանիսին մեղադրեն, բայց հաւատացած ենք, որ եթէ խնդրին քննական կերպով վերաբերվեն նրանք, շատ շուտով կը սովորեցնեն տղամարդկանց, որ իրանք ապրանք չեն:

Բայց ցաւը հէնց նրանումն է, որ մեծ դժուարութեամբ ենք վստահանում ընդհանուր սխալ հայեացքների դէմ կռիւ մղել: Մենք ակամայ յիշում ենք միայն մի եղակի դէպք, որ անտեղի չենք համարում առաջ բերել: Սրանից մի քանի տարի առաջ մի գեղեցիկ, երիտասարդ ու կրթված աղջկայ առաջարկութիւն է անում մի հարուստ, բայց տգէտ վաճառական, և որքան եղաւ «արշինատիրոջ» զարմանքը, երբ օրիորդից մերժում ստացաւ: Եւ այդպիսի՝ կրթված ազգերի մէջ սովորական երևոյթը մեր մէջ տեղի տուեց բամբասանքների, ինսինուացիաների, և ցաւալին այն էր, որ նոյն իսկ կրթված օրիորդների շրջանում: Բայց երիտասարդ աղջիկը ունեցաւ այնքան քաջութիւն, որ չը վախեցաւ բամբասանքներից և անդրդվելի մնաց իր վճռի մէջ: Այժմ նա մի շատ պատուաւոր մարդու կին է: Ահա թէ ինչպէս պիտի վերաբերվել խնդրին:

Մեր կարծիքով՝ նախ պէտք է մի հիմնական կարծիք, հայեացք ստեղծել ամուսնացող օրիորդների մէջ և ապա կը տեսնէք, որ հոսանքը կը փոխվի: Կրկնում ենք՝ չենք արդարացնում տղամարդկանց, այլ պահանջում ենք առաջին քայլը օրիորդներից:

Ց. Սոլ.

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՁԻԶԱԳԻՑ

—

Հոկտեմբերի 13-ին

...«Այս տարի էլ մեր սպասած հացը չեկաւ», —ահա այս խօսքերն են արտասանում բոլոր գիւղացիները Դարաչիչագի շրջանում: Սպասած հացը, իրաւ, չը ստացվեց, նախ՝ այն պատճառով, որ յունիս և յուլիս ամիսներում երաշտութիւն տիրեց, իսկ երկրորդ՝ տաք քամիների աղդեցութեան շնորհիւ հացահատիկները մասամբ փչացան, այնպէս որ հացահատիկների մի մասը վոիտ է՝ քամաքաշ: Դաշտային տեղերում, որտեղ զգալի էր երաշտութիւնը, աւելի վնասարիւն, երբէք, ի հարկէ, չարդարացնելով տղամարդկանց: Եւ եթէ առաջին քայլը մենք պահանջել ենք օրիորդներից, այդ էլ նրա համար, որ սրանք, ինչպէս ասել ենք, կրթութեամբ աւելի բարձր են կանգնած: Ցօդուածագիր պարոնը համաձայնվելով, որ օրիորդները աւելի բարձր են կրթութեամբ, այնու ամենայնիւ կրկնում է այն սովորական միտքը, թէ ինչ անեն խեղճ աղջիկները, երբ ստիպված են չուզած ընտրութեան ենթարկվել: Սա, մեր կարծիքով, սխալ է: Ենթադրենք, որ պ. թղթակցի ասածն ուղիղ է—օրիորդն ստիպված է գնալ չուզած փեսային: Ապա ինչու համար է նրա կրթութիւնը. մթթէ նրա համար, որ ենթարկվի ընդհանուր հոսանքին և անհետանայ նրա մէջ: Մենք միշտ սովոր ենք մեղադրել շրջանը, հոսանքը. բայց մթթէ քիչ է պատահում, որ մի ձայնը ձեռք է բերում գերակշիռ նշանակութիւն և լինում է պատճառ դէպքերի նոր ուղղութեան: Կրթված մարդը պիտի ունենայ սեփական կարծիք, ինիցիատիվի ոյժ: Ի հարկէ սրա համար շատ անգամ զոհողութիւններ է պահանջվում, բայց ինչ արած, քանի որ ամեն մի առաջադիմական գործ և թէ նոր հոսանք պահանջում է զոհ. թողէք մի քանի օրիորդներ մնան չամուսնացած, թողէք մի քանիսին մեղադրեն, բայց հաւատացած ենք, որ եթէ խնդրին քննական կերպով վերաբերվեն նրանք, շատ շուտով կը սովորեցնեն տղամարդկանց, որ իրանք ապրանք չեն:

Բայց ցաւը հէնց նրանումն է, որ մեծ դժուարութեամբ ենք վստահանում ընդհանուր սխալ հայեացքների դէմ կռիւ մղել: Մենք ակամայ յիշում ենք միայն մի եղակի դէպք, որ անտեղի չենք համարում առաջ բերել: Սրանից մի քանի տարի առաջ մի գեղեցիկ, երիտասարդ ու կրթված աղջկայ առաջարկութիւն է անում մի հարուստ, բայց տգէտ վաճառական, և որքան եղաւ «արշինատիրոջ» զարմանքը, երբ օրիորդից մերժում ստացաւ: Եւ այդպիսի՝ կրթված ազգերի մէջ սովորական երևոյթը մեր մէջ տեղի տուեց բամբասանքների, ինսինուացիաների, և ցաւալին այն էր, որ նոյն իսկ կրթված օրիորդների շրջանում: Բայց երիտասարդ աղջիկը ունեցաւ այնքան քաջութիւն, որ չը վախեցաւ բամբասանքներից և անդրդվելի մնաց իր վճռի մէջ: Այժմ նա մի շատ պատուաւոր մարդու կին է: Ահա թէ ինչպէս պիտի վերաբերվել խնդրին:

Մեր կարծիքով՝ նախ պէտք է մի հիմնական կարծիք, հայեացք ստեղծել ամուսնացող օրիորդների մէջ և ապա կը տեսնէք, որ հոսանքը կը փոխվի: Կրկնում ենք՝ չենք արդարացնում տղամարդկանց, այլ պահանջում ենք առաջին քայլը օրիորդներից:

Ց. Սոլ.

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՁԻԶԱԳԻՑ

—

Հոկտեմբերի 13-ին

...«Այս տարի էլ մեր սպասած հացը չեկաւ», —ահա այս խօսքերն են արտասանում բոլոր գիւղացիները Դարաչիչագի շրջանում: Սպասած հացը, իրաւ, չը ստացվեց, նախ՝ այն պատճառով, որ յունիս և յուլիս ամիսներում երաշտութիւն տիրեց, իսկ երկրորդ՝ տաք քամիների աղդեցութեան շնորհիւ հացահատիկները մասամբ փչացան, այնպէս որ հացահատիկների մի մասը վոիտ է՝ քամաքաշ: Դաշտային տեղերում, որտեղ զգալի էր երաշտութիւնը, աւելի վնաս-

վեց հացը, իսկ լեռնային մասերում համեմատաբար անվնաս մնացին՝ գիշերային ցողերի և կլիմայի խոնաւութեան շնորհով։ Գարին, որի մի սայլից (40 խուրձ) առատ տարիներում ստացվում էր 18—20 պուդ, այս տարի արդիւնաբերեց 12—14 պ.։ Ցորենը նոյնպէս միջակ արդիւնք ունի, այն է սայլը արտադրում է 10—12 պուդ, մինչդեռ արգասաւոր տարիներում այդքան հացաբոյսը արդիւնաբերել է առնուազն 15—16 պուդ ցորեն։ Հաճարը, սօրակը նոյնպէս համեմատաբար միջակ արդիւնք ունեցան, որը, նայած տեղի և հողերի յատկութեան՝ անբաւարար կարելի է համարել։ Բայի դրանից հացահատիկների մի փոքր մասը տեղ-տեղ վնասվել է «մրիկ» հիւանդութեամբ։

Անցեալ թանգութեան տարիների փորձերը այն ստիպան են վախեցրել գիւղացիներին, որ նրանք իրանց երկրագործական բոլոր նիւթերի մասին այժմ սկսել են լուրջ կերպով հոգ տանել։ Օրինակ առաջներում գիւղացու համար առանձին նշանակութիւն չունէին խոտը, դարմանը, գարին և այլն, որոնց, իբրև «տանու արդիւնք», նա գործ էր ածում խիստ առատութեամբ։ Իսկ այժմ, ընդհակառակը, դրանք գիւղացու համար շատ խանգ արժէք ունեն, և նա բանեցնում է մեծ զգուշութեամբ, նոյն իսկ վախվխելով. ծախում, առնում է դողդողալով։ Այդ երևում է նրանից, որ տարիներ առաջ մի որ և է գիւղում, երբ գիւղացին հացահատիկ էր ծախում՝ նրա 40 ֆունտանոց ցորենի «կօտը» (չափ) կշռում էր 42—43 ֆունտ։ Մի ուրիշ գիւղում ժողովուրդը գործ էր ածում մի լարանոց (12 ֆ.) չափ. այդ կօտը նոյնպէս 13—14 ֆունտ էր կշռում և դա գիւղում յայտնի չափ էր. շատերը ցանկանում էին նրանով առնել, ծախել իրանց հացահատիկները։ Իսկ այժմ փորձեցէք նոյնպէս «կօտով» գնել գիւղացուց ցորեն կամ գարի,—նա ձեզ կը տայ 38 ֆունտանոց չափով փոխանակ մի պուդի, և մի լարանոց «կօտով»՝ 10 ֆունտից ոչ աւելի կշռող... Այդպէս են միւս մթերքները։ Գիւղացին այդ կերպ է առնում ծախում այժմ, որովհետև անարգասաւորութիւնը նրան աղքատացրել է, նրա աչքը վախացրել և այդ դրութիւնը նրան սովորեցրել է շատ բան... Աղքատութիւնը ինչ ասէք, որ չը հանի մարդու գլխին։ Այո, աղքատութիւնը՝ նոյն իսկ բարեգործ գիւղացուն երբեմն խաբեբայ կը դարձնի... Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս 16 հոկտեմբերի

Մանուկների հոգատարութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնն զբաղված է ներկայումս մանկական տան շինութեամբ։ Այդ տանը, որ պէտք է ունենայ ձրի սեղանատուն, պէտք է պահվեն յիսուն անապատան մանուկներ, որոնք մնացել են միայնակ, փողոցներում ընկած, առողջապահական անմխիթար վիճակի մէջ։ Բացի դրանից մտադրութիւն կայ ձրի ճաշ տալ դարձեալ 50—100 մանուկի, որոնք թէև ապաստան ունին, բայց մնացել են անօթի և անապահով։ Այդպիսի հաստակրելի մի նպատակ պահանջում է մեծ դրամական ծախսեր։ Վարչութեան որոշմամբ և ընդհանուր ժողովի հաւանութեամբ այդ նպատակի համար անհրաժեշտ է 6000—6500 բուբլի տարեկան ծախք։ Այդպիսի մի մեծ ծախք ընկերութեան միայն մի բաժնի համար անկարելի է ծածկել անդամակցական վճարներով, թէև անդամների թիւը մեծ է, աւելի քան 750 հոգի։ Այդ պատճառով վարչութիւնն ստիպված է դիմել Թիֆլիսի հասարակութեան բոլոր խաւերին, յուսալով նրա հաստակրութեան, որ արդէն նա ցոյց տուեց ընկերութեան առաջին քայլերին։

Որոշած լինելով կազմել բարեգործական բազար վաղը, կիրակի, հոկտեմբերի 18-ին, Թամամշեվի քարվանսարայում, վարչութիւնը յայտնում է, որ նա բազարի համար ստացել 2000-ից աւելի առարկաներ, որոնց վաճառումից, եթէ նոյն իսկ էժան գնահատվելու լինեն, դոյացած գումարը մուտքի վճարի հետ միասին կարող է կազմել բաւականաչափ լաւ հիմնադրամ ներկայ գործի համար։ Ցանկանալով բոլորովին ապահովել այս բարի նպատակը, վարչութիւնը մտադիր է բացի վաղվայ բազարից, կազմել մի շաբաթից յետոյ, հոկտեմբերի 25-ին, պարերեկոյթ բազարի հետ միասին։

Ցոյս ունենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը թէ հոկտեմբերի 18-ին և թէ 25-ին իր ներկայութեամբ կը նպաստի հիմք դնելու այս կարեւոր և օգտաւէտ գործին։

Նախագահ վարչութեան՝ Ա. Կօշիբակին

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ուրմի, սեպտեմբերի 22-ին

Գոհութեամբ սրտի գալիս եմ հրապարակաւ շնորհակալութիւնս յայտնելու ինչպէս «Մշակի» խմբագրութեան, նոյնպէս և Թաւրիզի Հայաստեաց բարեգործական ընկերութեան, որ բարեհաճեցաւ Ատրպատականի թեմի առաջնորդ Սահակ սրբազանի քաջալերական նամակաւ աւետել ինձ՝ թէ փափագում է մի ուսումնարան բանալու գաւառիս մէջ։ Սալմաստից վերստին տեղս դառնալով՝ վիճակիս փակեալ երեք ուսումնարանաց համար, մեր պատասխանատուութեան ներքև՝ նախկին ուսուցիչները վարձելով բանալ տուինք քաղաքի, Գիւարդուպատի և Նախիջևանթէփէյի ուսումնարանները։ Հայաստեաց ընկերութեան նոր բանալիք ուսումնարանը ևս առաջարկած ենք հաստատելու քաղաքիս կէս ժամաչափ հեռաւորութիւն ունեցող և 105 հայ տուն պարունակող ասորաբնակ Ռահվայ գիւղումը, որով Ուրմիայում կունենանք չորս ուսումնարան, իսկ Բարանտուզում մի բարերարի ծախքով բացուելու է մի ուսումնարան, որի ուսուցիչն ուղարկված է։ Աւելորդ չենք համարեր յայտնել, թէ քաղաքիս և Նախիջևանթէփէյի ուսումնարաններէն զատ՝ ոչ մի գիւղում ուսումնարանի յարմար չինութիւն չը կայ և ոչ իսկ միաձև դասագրքեր, սեղաններ, աթոռներ և գիւղական ուսումնարանաց վայելուչ զանազան պէտքեր։ Քաղաքիս ուսումնարանը կառավարվում է զանազան վայրերէ տեղս եկող վաճառականաց փոխանակագիրների վրայ դրված հասոյթներով։ Վերոգրեալ պէտքերը ևս կը խոստանանք հեռագիրով լրացնելու. երբ մեր ցանկացած օգնութիւններին արժանանանք, որոց ժամանակարարումը պէտք է կատարուի քաղաքիս նորընտիր հոգաբարձութեան միջոցով, որոնք են՝ Ստեփան Ցովհաննեան, Նիկոլայ Հասրէթեան, Տիգրան մահտեսի Գիւլօեան, Ցովհաննէս մահտեսի Կարապետեան և Կարապետ Կարիպեան։

Ուրմիայում 12 ուսումնարաններ ունենալու համար առանձին նամակներով ևս դիմումներ եմ արել բարեգործութեամբ յայտնի անձնաւորութեանց, յոյս ունեմ, թէ նոքա ևս պիտի օգնեն՝ յարմար դատած միջոցներով։ Մնում է «Մշակի» միջոցով կրկին հրաւէր կարդալ, որ ամեն կարող և բարեսէր ազգայինք ջանան փութով օգնութեան ձեռք կարկառել տգիտութեան հրդեհին մատնուած հայ հասարակութեան՝ վստահ լինելով թէ ձեր յորդորական ու սրտագրաւ գրուածքներ շատով կազդեն ուսումնասէր անձանց և բարենպատակ հաստատութիւնների վրայ։ Դուք՝ որ ամեն ազէտների միջոցին կրցէք էջ հայ հասարակութեան լուսաներ ժողովելու և բազմաչարչար ու տառապեալ դասակարգին բաժանելու շնորհն ունեցել, նմանապէս կարող էք և Ուրմիոյ ու Բարանտուզ գաւառների ոչ նուազ ազէտալի վիճակին դատապարտեալ հայ հասարակութեան փրկելու պատճառ դառնալ՝ ձեր ազգու յորդորներով։

Ինչպէս ասել էի, դարձեալ կրկնում եմ, որ ուսումնարանները (իւրաքանչիւր դպրոցի համար տարեկան ծախք կը լինի 300 բուբլի) միայն կարող են վերականգնել այս ուսումնապէս և բարոյապէս մնանկացեալ ժողովրդեան։ Կորուստը մեծ է և ողբալի. զի անզգուշութեան պատճառով հրդեհն սկսել է։ Լեզուները մոռանալու հետ պիտի մոռանան մի օր և ազգութիւն և այդ օրն էլ շատ հեռի չէ։ Քահանաներ կան այս վիճակում, որոնք սիմոնական կոչումով արժանացած են իրանց կարգին։ Եկեղեցական օրինաւոր ծիսակատարութիւն չը կան. մինչև իսկ հարազատ քոյրերու զաւակներ իրար հետ կամուսնացնեն և երբ պատասխանատուութեան են հրաւիրվում, ժողովրդի ներկայութեան անամօթաբար կանչում են՝ «Թիւրքանաս էմ», որի մի տգեղ օրինակին հանդիպեցայ անցեալներ։ Ցանցանքն ունի է.—բացայայտ է։

Ա. քահ. Շաղոյեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Սարիղամիշ, հոկտեմբերի 4-ին

Խնդրում ենք մեր այս երկտողը հիւրասիրէք «Մշակի» մտրիկ համարներից մէկի մէջ, իբր հրապարակական բողոք Սարիղամիշի տանուտէրի կոպիտ վարմունքի դէմ, որ տեղի ունեցաւ այսօր բազարում։ Դէպքը հետեւեալն է։ Տանուտէր Իսակեանց հրամայում է բանտարկել մի գաղթական (որ իբր թէ նրա բաժին անտառից փայտ էր գողացել). երբ խեղճ գաղթականը համարձակվում է արդարութիւն պահանջել, հատ գաւազանը՝ տանուտիրոջ հրամանով՝ խեղճի գլխին է կոտրվում. մի մարդու՝ որը թիւրքաց բռնութիւններից փախչելով՝ հանդիպում է իր արիւնակից ազգայի վայրենութեանը։ Կրկին ցաւալին, այն է, որ մեր տանուտէրը և իր ընկերը Զուրապեանց, այդքանով չի բաւականանալով՝ վիրաւորեցին նաև բոլոր գաղթականների սիրտը, ասելով որ «Թուրքերի ... որ ձեզ բոլորիդ չի կոտրեցին...» Փաստը պերճախօս է։ Այսքանը կը հարցնենք այդ աղաներից, թէ արդեօք գաղթականները քանի՞ անգամ ծանրացան նրանց վրա. կամ քանի՞ կոպէկ դուրս եկաւ նրանց գրպաններից մեր օգտին. և կամ ինչ օգնութիւն ցոյց տուին մեզ, որ մեզնից ձանձրանալով՝ մեզ Թուրքի սուրին արժանի կը տեսնեն. երանի՞ թէ Թուրքի սուրը մեզ էլ կոտրէր և մենք չը տեսնէինք մեր արիւնակից աղաների այս տխուր պատկերը։

12 ստորագրութիւններ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք ստացանք մի քանի նամակներ Պարիզից, և այդ նամակները մի տխուր փաստ են հաղորդում մեզ. Պարիզում եղող հայ ուսանողները երկու խմբի բաժանված՝ մի խումբը «Պարիզի հայ ուսանողական միութիւն» անունով, իսկ միւս խումբը՝ «Ակումբ հայ ուսանողաց Պարիզու» անուան տակ, սուր պայքար են մղում միմեանց դէմ։ Մի խումբը միւսի գոյութիւնը չի ուզում ճանաչել, և իբրև դրա հետևանք՝ առաջ են գալիս մեծ անախորժութիւններ։ Մեր ուսանող երիտասարդները Պարիզում շատ չնչին թիւ են կազմում. մեր կարծիքով նրանք ամենքն էլ կարող են խմբվել ուսանողական մի ընկերութեան մէջ, առանց անտեղի ընդհարումների։

—

Մեզ հաղորդում են, որ երէկ, հոկտեմբերի 16-ին, բելգիական Անտնիմ ընկերութեան դիրեկտոր Բօքի ուղարկել է քաղաքային ուղրավային մի թուղթ, որով յայտնում է, թէ ձիաքաշը նա չի յանձնի քաղաքին, ասելով որ դեռ չէ հասել յետ գնելու ժամանակը։

—

Մենք ստացանք Բալախանիից, Ա. Տէր-Աւետիքեանի միջոցով, 43 բուբլի, հանգանակած մի խմբի մէջ, յօգուտ Բաֆֆիի արձանի ցանկապատի։ Ներողութիւն ենք խնդրում նուիրատուներից, որ նրանց անունները չենք տպագրի, քանի որ, ինչպէս մի քանի օր առաջ յայտնեցինք, մենք վիրաւորական ենք համարում Բաֆֆիի յիշատակի համար, ընդհանուր հանգանակութիւն բանալ մի այնպիսի չնչին գումար հաւաքելու, ինչպէս է 400 բուբլին, որ յանձնաժողովը խնդրում է, որպէս զի արձանի շուրջը ցանկապատ չինի։ Այդ փոքրիկ գումարը, կրկնում ենք, կարող է նուիրել մի կամ մի քանի հայեր, առանց ստիպելու, որ ընդհանուր հանգանակութիւն բացվի ազգի մէջ, թէ ինչ է՝ մի փոքրիկ ցանկապատ պիտի չինվի...

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Շամախու թեմի կոնսիստորիայի կարգադրութեամբ այս օրերս Դերբենդ եկաւ Խ. քահանայ Փանոսեանց՝ մեր երէցփոխ Բունեաթեանցի հաշիւները քննելու համար։ Հոկտեմբերի 4-ին նա ընդհանուր ժողովի էր հրաւիրել ծխականներին, բայց ափսոս, որ շատերը չէին գնացել, մինչդեռ դա երկրորդ հրաւէրն էր։ Բանը նրանումն է, որ մեր ժողովներին մատակցելը կատարեալ պատուհաս է դառել. մի խումբ մարդիկ պահապան հրեշտակների նման ոչ ոքի չեն թողնում բերան բաց անելու և երէցփոխի հաշիւների մասին մի բան ասելու. ասիական գռեհկութիւնը այն աստիճանի է հասել, որ ոչ ոք իրան ազատ չէ կարող համարել ամենակոպիտ անպատուութիւնից։ Հէնց այս պատճառով շատերը իրանց «մամուսը» առած մի կողմ են քաշվել և սպասում են, թէ ինչ է դուրս գալու երէցփոխի հաշիւներից։ Ժողովականներից մի քանիսը խնդրեցին քահանայ Փանոսեանցին, որ եկեղեցապատկան գումարները՝ առանց յետաձգելու դրվի պետական դանձարան։ Այս բանը գրեթէ ամբողջ հասարակութեան ցանկութիւնն է. քննիչ քահանան խոստացաւ դիմել հոգևոր իշխանութեան՝ անպատճառ գլուխ բերելու ժողովրդի պահանջը»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Չը նայած, որ Շուշին գտնվում է բարձր սարի գլխին և օդը լաւ է, բայց այսօր նա զանազան վարակիչ հիւանդութիւնների դաշտ է հանդիսանում։ Ներկայումս տիֆը խիստ տարածված է և սպառնալի դիրք է բռնել։ Քաղաքում 100-ից աւել տիֆով հիւանդներ կան, մի թիւ, որ պահանջում է՝ այդ ախտի առաջն առնելու համար մտածել։ Ոչ սակաւ նպաստում է տիֆի տարածման քաղաքի անմաքրութիւնը։ Սա ամենակեղտոտ քաղաքներից մէկն է։ Փողոցներում՝ էլ սատկած կատու, շուն, հաւ, ինչ ասէք թափված են. ձորերի միջով հոսում է քաղաքի արտաքնոցների բոլոր կեղտոտութիւնները։ Խմելու ջուրը անց է կացրած զանազան թաղեր, բայց ոչ առողջապահական պայմաններով. ջրանցքն անցնում է ամենակեղտոտ տեղերով. մի խօսքով սանիտարական մասը բոլորովին անուշադրութեան է մատնված։ Քաղաքային վարչութիւնը բոլորովին հոգ չէ տանում այդ ախտի առաջն առնելու համար, ինչպէս և չէ մտածում քաղաքի մաքրութեան համար։ Մեր կարծիքով՝ վարակիչ հիւանդութեան չը տարածվելու համար, հարկաւոր է, որ քաղաքը ունենայ վարակիչ հիւանդների համար առանձին հիւանդանոց։ Ժողովուրդը վաղուց սպասում է, թէ ահա կը բացվի եղբ. Ժամարեանցների խոստացած հիւանդանոցը, բայց մինչև այսօր չէ բացվել, չը գիտենք քաղաքային վարչութեան անհոգութեան վերագրենք այդ, թէ մի այլ պատճառի»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Ամբողջ շաբաթ աշխատելը սովորական բան է այստեղի գործակատարների համար. և այդքան ծանր, մաշող աշխատանքից յետոյ, հնչտ բան է արդեօք գէթ մի օր չը հանգստանալ... Շարունակ փակված ապականված մթնոլորտում, ոտի վրա կանգնած լինել ամբողջ օր, ահա՛ մեր գործակատարների դրութիւնը։ Եւ, ահա, նորերս ստացվեց Թիֆլիսի հանանգապետի կարգադրութիւնը՝ կիրակի և կայսերական տօներին, մինչև կէսօր, խանութները փակելու մասին։ Սա մի բարիք է մեր գործակատարների համար։ Մի երիտասարդի նախաձեռնութեամբ, 1893 թվին, գործակատարները և մասամբ վաճառականները դիմեցին նահանգապետին նոյն խնդիրքով. նահանգապետը յարգեց նրանց խնդիրքը, բայց, թայլ մարդկանց շնորհիւ՝ երկար չը տևեց խանութների փակումը։ Ցանկալի է, որ մեր գործակատարները իրանց ազատ ժամերը չը նուիրեն արբեցողութեան և թղթախաղին, այլ վարեն օրինաւոր կեանք»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Русскія Вѣдомости» լրագրին, որ ներքին գործերի մինիստրութիւնը մշակել է արդէն Աստրախանի նահանգում և հիւսիսային Կովկասում զէմստվօ մտցնելու ծրագիրը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՆՏԱԽՏ ՎԻԵՆՆԱՑԻ ՄԷՋ

—

Բերլինից հեռագրում են մայրաքաղաքի լրագրներին. «Այստեղի բժշկական աւտորիտէտները ամենամեծ ուշադրութեամբ հետևում են Վիեննայի մէջ տեղի ունեցած ժանտախտային դէպքերին։ Գերակշռում է այն հայեացքը, թէ վարակման տարածվելը շատ հաւանական չէ։ Վիրխով յայտարարեց, որ ժանտախտի տեղափոխութիւնը օդի միջով մինչև այժմ յայտնի չէր. բայց Վիեննայում հիւանդացած մարդիկ կարող էին վարակել ուրիշներին նախ քան նրանց առաջն առնելը։ Լէյդէն համարում է Վիեննայի դէպքերը ոչ այնքան վտանգաւոր, որովհետև արհեստական կերպով սնուցած բակտերիաները մեծ այժ չունեն։ Կոխ պատմեց բժշկական շրջաններում, որ իր ինստիտուտում, չը նայած օրինակելի կարգու կանոններին, վաղուց արգելված է որ և է փորձ անել ժանտախտի միկրօբների հետ, որովհետև դա վտանգաւոր բան է»։

Մի և նոյն հանգստացնող կարծիքները յայտնում են և Վիեննայի գիտնականները։ Այսպէս, պրոֆէսսոր Պալտաուֆ յայտնեց «Wiener Abendpost» լրագրի աշխատակցին, որ Բարիշի ժանտը չը պիտի առանձին ահ ներշնչէ հասարակութեան. իսկ պրոֆէսսոր Դրաշէ ուղղակի հաւատացնում է, որ համաճարակ չի լինի և անհեթեթութիւն է կարծել, թէ լաբօրատորիայի միջոցով կը տարածվի համաճարակ հիւանդութիւն։

Թէ որքան մեծ է եղել երկիւղը Վիեննայում, երևում է այն հանգամանքից, որ Բարիշի ժանտախտով վարակվելու փաստը հաստատվելուց յետոյ, այնքան շշկվեցին, որ բժշկական միջոցներ ձեռք չառնվեցան նրա շրջապատողներին վարակումից ազատելու համար։ Ցայտնի է որ դոկտոր Խաւկին Հնդկաստանում մեծ աջողութեամբ պատուաստում է ժանտախտը և այդ գիւտի շնորհիւ մեռնողների թիւը շատ պակասում է. Վիեննայի բժիշկները առաջին րօպէին այնքան գլուխ կորցրին, որ այդպիսի պաշտպանողական պատուաստ չարին ոչ հիւանդ Բարիշին խնամող կանանց, ոչ էլ բժիշկ Միւլլերին, որոնք և վարակվեցան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆիլիպեան կղզիներից պաշտօնական տեղեկութիւններ են ստացված, որ տեղացիների և ամերիկացիների մէջ ընդհարումներ սկսվեցան։ Ծովապետ Դէվի թոյլ չը տուեց տեղացիներին բարձրացնել Մանիլլայում հանրապետական դրօշակ և կարգադրեց ձերբակալել տեղացիների բոլոր նաւերը։

—Նախագահ Մակ-Կինլի Զիկագօի մէջ մի ճառ արտասանեց, դրականապէս յայտնելով որ Միացեալ-Նահանգները չեն հրաժարվի ոչ մի հողից, որը կարելի է պահանջել Սպանիայից։ «Միացեալ-Նահանգների ժողովուրդը, ասաց նա, կարող է հաժոդված լինել, որ պատերազմը դատարկ բաների համար չէր մղված»։

—«Times» լրագրի Պարիզի թղթակիցը գրում է, որ գեներալ Կուրոպատկին Պարիզ գնաց այն պատճառով, որ իր աչքով տեսնէ, թէ ինչ ազդեցութիւն են արել վերջին անցքերը և Դրէյֆուսի գործը ֆրանսիական զօրքի հոգու և տրամա-

դրութեան վրա, և գտաւ որ զինուորական տեսակէտից ոչ մի տագնապալից նշան չէ երեւում և զօրքն անարատ է։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբերի։ Սամարղանդի շրջանի Իսկենդերեան փոլօստը յայտարարված է վտանգաւոր՝ ժանտախտի տարածման կողմից։

ՎԻԼՆՕ, 16 հոկտեմբերի։ Մուրավիեվի արձանի բացումը նշանակված է նոյեմբերի 8-ին։

ՊԱՐԻԶ, 16 հոկտեմբերի։ Հանգստութիւնը կատարեալ է. Պարիզը ընդունեց իր սովորական տեսքը։

ՊԱՐԻԶ, 16 հոկտեմբերի։ Լրագրներն ասում են, որ մինիստրների խորհրդի նախագահ կը լինի կամ Դիւպուի, կամ Րիբօ։

ԼՕՆԴՕՆ, 16 հոկտեմբերի։ Պեկինից հաղորդում են, որ չինական զինուորները յարձակվեցին մի քանի անգլիացի ինժենէրների վրա. երկու ինժենէր վիրաւորված են. մի երկաթուղային պաշտօնեայ սպանված է։

ՊԵԿԻՆ, 16 հոկտեմբերի։ Դիպլօմատիական մարմինը վճռեց պահանջել, որ անմիջապէս պաշտօնից արձակվեն այն զինուորները, որոնք յարձակվեցին անգլիացի ինժենէրների վրա։ Պահանջը խսկոյն կատարվեց։ Անգլիական դեսպանը առաջարկեց պատժել զինուորներին։ Կայսրուհի-խնամակալուհին հրամանագրեց պատժել մեղաւորներին։

ՊԱՐԻԶ, 16 հոկտեմբերի։ Մինչև կէսօր ոչինչ ցոյց չեղաւ դատաստանական շինութեան չուրջը։ Շինութեան դարպասը փակած է։ Արձակված են խիստ հրամաններ։ Վճռաքինիչ ատեանի նիստը բացվեց կէսօրին։ Դահլիճը լի է. ներկայ եղողների թւումն են տիկին Դրէյֆուս, փաստաբաններ՝ Դեմանժ և Լաբօրի։ Զեկուցանող Բարդ սկսում է իր ճառը։ Ցիչելով այն յուզմունքը, որ պատճառեց գործը, և վերաքննութեան պահանջը, նա անցաւ Դրէյֆուսի մեղադրութեան պատմական տեսութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րօպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րօպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րօպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րօպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րօպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րօպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րօպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րօպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րօպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րօպէին. Բագու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րօպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րօպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րօպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րօպէին. Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րօպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին և միտեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

38—150 　　Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

1899 Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ

Թ. ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ

ՀԱՐՈՒՍՏ ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎ ԵՒ ԵՐԱԶԱՀԱՆՈՎ

Ցանկացողները թո՛ղ շտապեն մեզ յայտնելու, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել։

Թիֆլիս՝ Մակար Զմշկեան

(ե. չ.) 　　4—20

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ ընտանիքներում։ Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12 ժամը։

Դիմել հետևեալ հասցէով Головинскій, Посудный магазинъ Элiозова. 　　3—5

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

„ՄՏՔԻ ՄՇԱԿԸ"

(Մնում են փոքրաթիւ օրինակներ)

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ

Դիմել հեղինակին, «Մշակի» Խմբագրատուն։ 　　7—8

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գրասենեակում վաճառվում են՝

	Ր.	Կ.
ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ . .	1	»
ՍՏԵՓԱՆՆՈՍ ՏԱՐՕՆԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.	2	»
ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ . . .	1	50
ՂԵՒՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ	2	»
ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ ուսուցիչների համար.	1	75
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Դարտելի.	1	25
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Լունկեվիչի	1	»
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԱՍՏՂԱԲԱՇՈՒԹԻՒՆ Ֆլամմարիօնի	1	»
ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Գարագաշեանի.	4	»
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Պալասանեանի .	1	50
ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Ճանիկեանի . .	2	»
ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն)	1	20
ԱԶԳԱՅԻՆ ՋՕՋԵՐ, Պարոնեանի . . .	1	»
ԴԱՒԻԹ ԿՕՊՊԵՐՖԻԼԴ, Դիկկենսի . . .	1	»
ՎԷՊԻԿՆԵՐ և ՋՐՈՅՑՆԵՐ, Մօպասանի .	1	»
ՑՈ՞ ԵՐԹԱՍ, Սենկեվիչի	1	50
ՄԱՐԴ ԵՄ, Էբերսի	1	»

Դիմել՝ Тифлисъ Тифлисское Общес. Изд. Арм. книгъ. 　　12—15

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են

ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ՄԵԾԱԴԻՐ և ՓՈՔՐԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, որ արժեն 1 ր. 40 և 20 կօպէկ։ Դիմել՝ Тифлисъ, фотографу Теръ-Гевондянцу. 　　5—15

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

1899 թ. առաջին հայերէն

ՊԱՏԻ ՕՐՈՑՈՅՑԸ

(XI տարի)

Գինը 50 կօպէկ. գումարով զիջումն։

—

ԼՈՒՄԱՅ

գրական հանդէսի 1899 թ. (IV տարի) բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Տարին 2 գիրք (1000 երես)—3 րուբլի։

—

Մամուլի տակն են յայտնի երգիծաբան Յ. Պարոնեանի

ԾԻԾԱՂ

(500 երես, հեղինակի պատկերով) և

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(180 երես) երկերը։ Վաղօրօք ցանկացողը վճարում է երկուսին 1 ր. 30 կօպէկ. տպվելուց յետոյ՝ 1 ր. 60 կօպէկ։

Հրատարակիչ՝ Գիւտ ա. քահ. Աղանեանց

(չ. չ.) 　　2—2

БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ БАЗАРЪ

18-го октября 1898 г.

Въ каравансараѣ Тамамшевыхъ, на Эриванской площади

Въ пользу перваго въ Тифлисѣ дѣтскаго дома съ безплатной столовой для дѣтей Тифлисскаго общества попеченія о дѣтяхъ.

Дешевая продажа 2000 предметовъ, пожертвованныхъ членами общества и другими лицами и заведеніями, сочувствующими дѣтскаго дома и столовой для бѣдныхъ и безпріютныхъ дѣтей.

ДВА ХОРА МУЗЫКИ, 　БУФЕТЪ

ЗА ВХОДЪ СО ВЗРОСЛЫХЪ 20 КОП., СЪ ДѢТЕЙ И УЧАЩИХСЯ 10 КОП.

Начало базара въ 11 час. дня.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 28 հոկտեմբերի (9 նոյեմբերի) ՍԻՐԿԱՍՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԿ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլյուբակինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերշենռօդերին։ (ե. հ. չ.) 　　6—20

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Ընդունվում են երկու սեռի երեխաներ և պատրաստվում՝ գիմնազիա, ռէալական և այլ դպրոցներ մտնելու համար՝ БАКУ, полиц. ул. д. Кирѣева. (ե. հ. չ.) 　　3—10

ՎԱՃԱՌԱՀԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԵՒ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՈՎ, 3 р. 70 ԿՈՊԷԿ

2-ое вновь обработанное и дополненное изданіе

ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ".

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ красках и двѣ: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г." И. К. Айвазовскаго и „Весенняя буря" Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.

Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей* и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.

3—10 　　Завѣд. ред. Гр. Джаншіевъ.

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ստացվել և վաճառվում է՝

	Ր.	Կ.
«БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ» ժողովածուի երկրորդ ճոխացրած հրատարակութիւնը, գինը 3 ր. 25 կ. ճանապարհածախսով . .	3	75
Նոյն տեղը վաճառվում են՝		
ПОЛОЖЕНІЕ АРМЯНЪ ВЪ ТУРЦІИ երկրորդ հրատ.	1	—
ПОЛОЖЕНІЕ ДѢЛЪ ВЪ ТУРЕЦКОЙ АРМЕНІИ	—	35
ՍՈՒԽԱԿ երգարանի վերջին հրատարակութիւնը	1	—
ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ, Գէորգ Հախվերդեանի հրատարակ.	—	50

Պէտք է դիմել ուղղակի այս հասցէով՝ ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Libraire Central. (ո.) 　　6—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

(Պատմական վէպ, 755 երես)

Գինը 1 ՌՈՒԲ. 30 ԿՈՊԷԿ (ոսկեկազմ 2 րուբլի)

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատանը) և Կենտրօնական գրավաճառանոցում։ ԲԱԳՈՒՈՒՄ—պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղամօվի գրասենեակ. ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում։

Հեղինակի հասցէն՝ *ТИФЛИСЪ, редакція „Мшакъ"*. 　　4—10

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Октября 1898 г. 　　Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Melик. ул. № 13